Արեգակը թէեւ մի ժամ առաջ ծագել էր, բայց չէր երեւում: Օրը մառախլապատ էր, եւ մռայլոտ ձորի խլութիւնը տալիս էր նրան գերեզմանի նմանութիւն: Այստեղ մի հազիւ նշմարելի շաւիղ ոլոր-մոլոր գնում էր ձորի միջով, տեղ-տեղ թաքնւում էր խոտերի մէջ, իսկ երբեմն ծածկւում էր փուլ եկած ժայռերի բեկորներով: Այս զառիվայր եւ զառիվեր ճանապարհով կարող էին շրջել միայն եղջերուները:

Խորասուզուած մտածութիւնների մէջ, համարեա աննկատելի էր ինձ ճանապարհի դժուարութիւնը, ինձ պաշարել էր աստուածածնի ուխտագնացութեան ուրախութիւնը: Մտածում էի, այնտեղ ուխտաւորների թւում կը տեսնեմ մեր քաղաքացիներից շատերին. գուցէ մայրս, Մարիամը եւ Մագթաղը նոյնպէս նրանց հետ կը լինեն: Մայրս ամէն տարի կատարում էր աստուածածնայ ուխտը: Որքա՜ն կ'ուրախանայ նա, որքա՜ն կ'ուրախանան քոյրերս, երբ որ ինձ կը տեսնեն: Երեւի նրանք իմ մասին շատ տխուր են, ինձ բոլորովին կորած են համարում...

Եւ վերջ ի վերջոյ ես մտածում էի, գուցէ կը տեսնեմ եւ Սօնային. նրա հայրն որպէս քահանայ կը գար գիւղացիների հետ (նրա հունձի օրն է), Սօնային եւս կբերէ իր հետ: Ի՞նչ կասէ Սօնան, երբ կտեսնէ ինձ:

Ծերունի որսորդի տունը գալեն յետոյ, առաջին անգամ ջերմ կարօտով ես յիշեցի մեր խրճիթը, հայրենական երկիրը եւ այն մարդիկներին, որոնց ճանաչում էի, որոնց հետ սնոել ու մեծացել էի:

Երեւցաւ մի բարակ վտակ, որ խաչաձեւ կտրելով իմ ուղին, թափւում էր փոքր-ինչ հեռու ձորի խորութեան մէջ: Նա այնքան յստակ էր, որպէս բիւրեղ: Երբ թեքոեցայ ջրիցը խմելու, տեսնում եմ, վտակը բերում է իր հետ խիստ մանր աւազներ, որ անկարելի էր խմել: Ես դիմեցի դէպի ջրի աղբիւրը, որ երեւում էր շատ հեռու չպէտք է լինի: Մի աղօտ բան անորոշ կերպով խլտտւում էր, թէեւ մօտ էր նա, բայց վաղորդեան մառախուղը թոյլ չէր տալիս պարզ տեսնել: Երբեմն կծկւում էր նա, երբեմն բաժանւում էր, եւ ամէն մի մասը տնկոելով գետնի վրայ, մարդու մռայլ կերպարանք էր ընդունում: Նրանք դարձեալ միացան եւ կազմեցին մի սեւ շարժուն գունդ: Ի՞նչ պէտք է լինի: Մօտենում եմ: Երկու արարած, միմեանց փաթաթուած, աշխատում էին մինը միւսին տակով անել: Նրանք կանայք էին: Մէկի ձեռքում փայլեց դանակը: Ես մօտ հասայ: Մարօն տարածել էր գետնի վրայ մի աղջկայ, եւ նրա բազուկը պինդ բռնած, աշխատում էր ձեռքից խլել դանակը: Սարսափելի մի տեսարան էր այդ: Երկու կատաղած առիւծուհիք մենամարտում էին: Մարօի հակառակորդը քրդուհի էր: Ես վրայ հասայ եւ բաժանեցի նրանց: